ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք,
ՀՀ, Լոռու մարզ, Գ.Գեղասար, Հեռ. 077799399
geghasar.lori@mta.gov.am

N 212
11 նոյեմբեր 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Կից ուղարկվում է Գեղասար համայնքի ավագանու թիվ 49-Ա, 50-Ն, 51-Ա և 52-Ա որոշումները:

Առդիր՝ 11 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՄԱՐՈ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կատ. Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Մ. Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 նոյեմբերի 2019թվականի N 49-Ա

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07.11.2019ԹՎԱԿԱՆԻ 13-ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Գեղասար համայանքի ավագանին որոշում է .

Հաստատել Գեղասար համայնքի 07.11.2019թվականի 13-րդ հերթական նիստի օրակարգը.

1. ՀՀ Լոռու մարզի Գեղասար համայնքում 2020թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին:

2. Գեղասար համայնքի համայնքային սեփականության 2019թվականի գույքագրման արդյունքների մասին:

3.Գեղասար համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՄԱՐՈ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 նոյեմբերի 2019թվականի N 50-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Գեղասար համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնքում 2020թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՄԱՐՈ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գեղասար համայնքի ավագանու
2019 թ. նոյեմբերի 07-ի թիվ 50 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ.

բ. սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

տասնհինգ հազար դրամ.

500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

քսանհինգ հազար դրամ.

1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

քսանհինգ հազար դրամ.

3000-ից և ավելիս քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

հիսուն հազար դրամ.

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

մեկ հազար հինգ հարյուր դրամ.

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

երկու հազար հինգ հարյուր դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով, տեղական տուրքը սահմանել՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր

մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն մեկ հազար հինգ հարյուր դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

դ) Համայնքի վարչական տարածքում քարե ցանկապատի կառուցման թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ երեք հազար դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար մեկ դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար ինը հարյուր մեկ դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար մեկ դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար հինգ հարյուր մեկ դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասերեք հազար հինգ հարյուր մեկ դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար մեկ դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար իննը հարյուր մեկ դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար մեկ դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար հինգ հարյուր մեկ դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասերեք հազար հինգ հարյուր մեկ դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

6. Ավագանու սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ.

7. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ տասը հազար դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝

համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ երկու հազար դրամ:

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձեռքերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել ինը հարյուր դրամ:

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ երկու հազար դրամ:

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ երկու հազար դրամ:

6) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության տեղական վճար սահմանել՝

1) կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր չափահաս բնակչի համար՝ տեղական վճար սահմանել ամսական մեկ հարյուր դրամ.

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսանհինգ դրամ.

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ տեղական վճար սահմանել ինը հարյուր դրամ:

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ առավելագույնը երեք հազար դրամ:

7) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ **հինգ հարյուր դրամ** փոխհատուցման վճար:

8) համայնքապետարանից քաղաքացիների պահանջով, նրանց անհրաժեշտ փաստաթղթերի պատճեներ տրամադրելու համար, յուրաքանչյուր թղթի համար՝ տեղական վճար սահմանել տաս դրամ :

9) համայնքը սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափը մեկ պայմանական միավոր անասունի համար ամսական կազմում է հիսուն դրամ փոխհատուցման գումարի չափով:

10) Խմելու ջրի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր չափահաս բնակչի համար՝տեղական վճար սահմանել ամսական մեկ հարյուր դրամ.

Գեղասար համայնքի ղեկավարի ժ/պ՝ Մարո Ավետիսյան

07 նոյեմբերի 2019թ.

գ, Գեղասար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 նոյեմբերի 2019թվականի N 51-Ա

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2019ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման Մասին» օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի պահանջներով, որոշում եմ.

Գեղասար համայնքի ավագանին հաստատեց համայնքի սեփականության ամենամյա պարտադիր 2019թվականի գույքագրման արդյունքները /համաձայն հավելվածի/:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՄԱՐՈ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված

Գեղասար համայնքի ավագնու

2019թ նոյեմբերի 07-ի թիվ 51-Ա որոշման

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Ապրանքանյութական արժեքների անվանումը	Չափի միավ	գինը	Փաստացի կանխիկ		Հաշվ.հաշվ տվյալներ	
				քանակ	գումար	քանակ	գումար
1	համակարգիչներ	հատ	նվիրատվություն	2			
2	Սքան	հատ	-//-	1			
3	տպիչ	հատ	-//-	1			
4	Սնուցող սարքեր	հատ	-//-	2			
5	ստեղնաշարեր	հատ	-//-	2			
6	մկնիկներ	հատ	-//-	2			
7	Ավտոմեքենա pajero io	հատ	1860040	1	1860040	1	1860040
8	համակարգիչ	հատ	10429	1	10429	1	10429
9	Գրասենյակային գույք օֆիսի սեղան դարագներով	հատ	43699	1	43699	1	43699
10	Գրասենյակային սեղաններ	հատ	15127	1	15127	1	15127
11	Գրասենյակային պահարաններ	հատ	36976	2	18488	2	18488
12	աթոռներ	հատ	57624	18	3201	18	3201
13	բասկաթոռ	հատ	15778	1	15778	1	15778
14	աղբարկղ	հատ	290000	22	45000	22	45000
15	Փողոցային լուսավորության համակարգ	հատ	999500	29	34465	29	34465
16	շերտավարագույրներ	հատ	99750	7	14250	7	14250
17	Գլան տարա /5տ/	հատ	1200	1	1200	1	1200
18	Գլան տարա /3տ/	հատ	1000	1	1000	1	1000
19	օպեվե		2100	1	2100	1	2100
20	Բնակելի տներ	հատ	290543	11	26413	11	26413
21	Վագոն-տնակ	հատ	23000	1	23000	1	23000
22	Երկաթյա գրքահարկ	հատ	2400	12	200	12	200
23	Ջրամատակարարման հանգույցներ	մետր	1220556	4	305139	4	305139
24	Նախասրահի հագուստի պահարան	հատ	20409	1	20409	1	20409
25	Ջրագծի խողովակ d=50մմ	մետր	280665	550	519	550	519
26	Ջրագծի խողովակ d=63մմ	մետր	65600	100	656	100	656

27	Էլեկտրական շարժիչ ջրամոիչով	հատ	157464	1	157464	1	157464
28	Գլան տարա /10տ/	հատ	328050	2	164025	2	164025
29	Խմոցների խողովակ	մետր	220000	20	11000	20	11000
30	Սեղաններ	հատ	109000	6	17500	6	17500
31	նստարաններ	հատ	109000	12	8750	12	8750
32	Օֆիսի գրասեղան	հատ	67228	5	13445	5	13445
33	գրքեր	հատ	20000	900	-	-	-
34	Գրասենյակային աթոռ	հատ	6174	1	6174	1	6174
35	տեսախցիկ	հատ	312500	2	156250	2	156250

Հանձնաժողովի Նախագահ՝ Մարո Ավետիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վաղինակ Մկրտչյան

-//- Ռոման Մկրտչյան

-//- Վրեժ Սիմոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 նոյեմբերի 2019թվականի N 52-Ա

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համայնքի ավագանու 2017թվականի մայիսի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 20-Ա որոշմանը համապատասխան , հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկվող հանձնաժողովի եզրակացությունները ՝ Գեղասար համայնքի ավագանին որոշում է .

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի :

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՄԱՐՈ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Գեղասար համայնքի ավագանու

2019 թվականի նոյեմբերի 07-ի **N 52-Ա որոշման**

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Խաչատրյան Գևորգ Վարդանի – տաս հազար դրամ, երեխայի ծննդյան գումար,
2. Սահակյան Հովհաննես Արիստակեսի – տաս հազար դրամ, երեխայի ծննդյան գումար,
3. Սերոբյան Արտակ Մանվելի – տաս հազար դրամ, երեխայի ծննդյան գումար,
4. Հիմոսյան Շավարշ Սուրենի - երեսուն հազար դրամ, սոց օգնություն:

ԳԵՂԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ _____ ՄԱՐՈ ԱՎԵՏԻՍՅԱՆ